

Խանդակաթ սիրովն՝ որ զմեզ
 Գգուեալ .
 Ղեպ հանգարտեցոյց՝ սիրաս մեր
 Ճմլեալ ,
 Վնեղով ՚ի տան՝ բերկրութեամբ
 Լցեալ :
 Փառք թագաւորին՝ ստրկամեծար ,
 Խնամական գթովն՝ որ ստրուկս
 պատուեալ .
 Խոր ծերացեցոյս՝ արժանի արար ,
 Համբուրել զԱՂն՝ քեռորդուցս
 զօծեալ ,
 Լըջթեա առ Տէր՝ Հայր գորու
 վական ,
 Օ ի արժանասցուք՝ չքնաղ տե
 սութեանն .

Նրտողին յաջմէ՝ Հօրն անեղական ,
 Սխակ արմաւոյ՝ փիւնիկ գերարիւնանն :
 Ար խրախոյս տայ մեզ՝ յանձան
 ձիչն այն ,
 Եկայք Հօր իմոյ՝ ժառանգք օրհ
 նութեանն .
 Փառք պատիւ նմա՝ այժմ և յաւի
 տեանն ,
 Կաւոյս կազմողին՝ Հօր իմաստու
 թեանն :
 Սրբիաննոս Վ :
 1871 Մարտ 23 Սահրդի թիով
 յԵրուսաղէմ Ժամեան
 Տիգրանակերտի :

Հ Ի Ա Ժ Ե Շ Տ Պ Ա Ն Դ Ի Տ Ի Ն

Ո՞վ , խանդ յիս բորբորի այսօր , խանդ հայրենեան
 Ար ՚ի սէր հայրենեաց զիմ սիրտ վառէ հայկեան ,
 Եւ նոր իմն արդ խրախոյս՝ արծարծեալ յիս այսօր
 Հրաւէր կարգայ ահա , հէգ սրտիս հրատուչօր :

Սրանալ ՚ի Հայաստան
 Աղջունեւ զՀայաստանն .

Ահ , քանի յոյժ դառն է ընդ աստեղօք օտար
 Պանդխտին շնչել շունչ , և կալ անդ ընդ երկար ,
 Երդնում արդ աւանիկ , յարեւ մեր վեհ քաջաց
 Աքք մեռան և հանգեան ՚ի փառս հայ հայրենեաց :

Երթալ ՚ի Հայաստան
 Համբուրել զՀայաստանն .

Աւստի արդ նիստ ՚ի ձի՛ սրտիւ քաջ և ազատ
 Օայս ձեզ որոտամ Հայք , ահա բաց ՚ի ճակատ ,
 Չեզ , իմ սրտի հատոր , ո՛հ եղբարք իմ պանդուխտ
 Բարեան արդ կաջկըք դուք , զի այս է իմ սուրբ ուխտ :

Վազել ՚ի Հայաստան
 Վրկել ո՛հ , զՀայաստանն .

Աւխտ զոր ուխտեաց անձն իմ և սիրտ հէգ և թշուառ
 Սինչ նա էր ընդ եղբարցդ , յայդ ՚ի լալեաց ՚ի վայր ,
 Եւ ձ ձեզ իմ երգոց ձայն , զոր ես երգէի միշտ ,

Մի կող անկարեկիր ընդ հայրենեաց մեր միշտ :

Այլ գնալ ՚ի Հայաստան

Սիրովել զՀայաստան :

Լըթամ զի հայրենեան արդ տոչորէ զիս հուր ,

Սեր հայրենեաց փարիլ զաւերակօք տխուր ,

Գնամ ես այսօր , ցօղել զպատրեալ զիմ շրթունս

ՅԼփրատայն , յԼրասխայն ագինաբուղիս յակունս :

Լըբեղ անդ զՀայաստան

Օրհնել անդ զՀայաստան :

Գնամ յոյս ՚ի սիրտ , տալ զիմ համբոյր անձկայրեաց

Օ աճիւնս մեր արի հարց՝ ամփոփող ցուրտ շիրմաց ,

Մտայր եղկելոյս , զի այս խանդ սրտատուչոր .

Օնոյն առնէր և ձեզ , որպէս և ինձ այսօր :

Թուշիլ ՚ի Հայաստան

Թաղիլ ՚ի Հայաստան :

Այս է իմ աղաղակ , այս սրտիս և փափագ

Օ որ կաթոգին անձկայր ՚ի վաղուց իմս հոգեակ .

Լըդնում ՚ի սուրբ ՚ի խաչ , երդնում ՚ի ձեր ճակատ

Թէ յայնժամ հայրենիք մեր հէպ՝ լիցի աղատ ,

Լըբ գնամք ՚ի Հայաստան

Պինտ գրկել զՀայաստան :

Իսկ և ոտք իմ ձիոյս՝ երբ կոխեն զհարց մեր հող

Սխտեմ , յերկիր անկեալ յպագանել աչք ՚ի ցօղ

Օ երկիր մեր հարց , զերկիր յոր և նոքա անկան ,

Լըկնի տուեալ և փառս՝ յհմասին գիրկ թռան :

Պոչելով . Հայաստան ,

Օրհնեալ լեր յաւխտան :

Իսկ թէ անդ որ օտար՝ ՚ի հայրենին իմ հող

Մահ սպառնալ ժպրհեցի , յիմ սիրտ քաջ ազդել դող ,

« Ընմիտ , որտուացից անդէն սրտիւ անահ ,

Ըստ ինձ վասն հայրենեաց փրկութեան քաղցր է մահ .

Օ ի մեռանել միայն

Եկի ՚ի Հայաստան :

Եւ մեռայց . . . այլ առիս չեւ հասեալ մահուն մութ

Ընէ՞ս արձակեցից ՚ի թշնամին անգութ ,

Եւ հե՞ս սրտի օրհնից , առ Հայաստանն իմ մայր ,

Եւ խոնարհեալ զիմ գլուխ , հանգեայց գոհ յամս յամայր

Ի սուրբ ծոց մայրական

Իմ մօրն Հայաստան : »

Ըսաց , երիվարին ահա մտրակ ՚ի կուշտ

Սրացաւ , հայրենեաց ՚ի ուէր մեռանել անշուշտ . . .

Սեռան նա , հայրենեաց եղեալ քաջ նահատակ ,

Այլ իրկնից յիւր ՚ի գլուխ ընկարաւ փառաց պատկ :
Քանզի այս ետ մեզ յոյս
Փրկիչ մեր տեր (Յիսուս :

Կրթութեամբ Տ. Սէնտիան
Պարտիզակի :

Կ Ե Ս Ա Ր

Կեսար յիսուսն վեց տարուան մե-
ռաւ : Սինչև քառասուն և երկու տա-
րեկան հասակն քաղաքացիի կարգէն
չէր ելած , և սակայն իւր հանձարը կը
յայտնէր թէ խիթալի տիրապետութե
մը պիտի ձեռնարկէ : Տասն և չորս
տարուան մէջ աշխարհս նուաճեց .
բնաւ մարդ մը չը գերազանցեց զայն ,
տաղանդի , փառասիրութեան և բազ-
դի կողմանէ՝ ոչ մէկ զօրապետ չը
կրցաւ ազգել անոր անձնուիրու-
թիւն մը իր վննուորաց , որք այնչափ
սիրով վառուած էին անոր համար ,
որչափ իրենց նախնիքը երբեմն հա-
սարակապետութե համար : Կոյնեաց
քաջութեամբ մը գոննիք կը բորբոքէր :
Ինչպէս բաղդը՝ նոյնպէս բնու-
թիւնը ձեռնուտ էր Կեսարին : Հա-
սակը բարձր էր , իր գոյնը պայծառ
սպիտակ , գլուխը ձուածեւ , երե-
սը լեցուն եւ գունաւոր , աչքերը
սեւ և կայտառ և մարմինը բարձրու-
գեղ էր : Իւր կորովի կազմուածքը
դախիատենդի քանի մը հարուածնե-
րով միայն այլայլած էր : Իւր գնաց-
քը ծանր և վեհ և ձայնը ջինջ . իր
ամեն շարժմանց մէջ աղնուական ջը-
նորհք մը կը փայլէր . թէպէտ այն-
չափ խիստ էր և անխոնջ աշխատա-
սէր , որչափ աներկիւղ վտանգի մէջ ,
բայց եւ այնպէս ոչ որ անոր չափ
զեմքի պզտնաց եւ հեշտութեանց

սէր չէ ունեցած : Կարծելի էր իրեն
հաճոյ երեւալ , ինչպէս հրամայել .
միշտ փառաւոր հանդերձներ ունէր
վրան , նորք կերպաններ և սքանչե-
լի ծոպեր : Կա ելցնէր իր զարդուց
վրայ ամենէն գեղեցիկ մարգարիանե-
րը և ամենազատուական քարերը :
Կը զարմանար մարդ անոր պալատի
մէջ գտնուած բազմաթիւ անդրինե-
րու և ամենէն երեւելի ճարտարա-
րուեստներու ձեռակերտաց վրայ :

Գերմանիոյ անտառներու մէջ ,
ինչպէս Կիրիկիի աւազներու մէջ , կը
տեսնուէր իր վրանին մէջ փայլուն
գորգ մը և կակուղ բազմոցներ . իր
տանը մէջ կը թագաւորէր խիստ կա-
նոնաւոր և խիստ մանրախոյզ բարե-
կարգութիւն : Իր տանը հազարա-
պետը շղթայի զարկաւ սեղանակցաց
իր կերածէն տարբեր հաց մատակա-
րարելուն համար :

Թէպէտեւ Կեսար անձնատուր ե-
ղած էր կրից , բայց ինձոյից չափաւ
զանցութիւնը իրեն անձանոթ էր :
Կատոն կ'ըսէր անոր համար թէ՛ հա-
սարակապետութի մը կործանել ու-
զող մարդկանց մէջ , առաջին բարե-
խառն ու ժուժկան ինքն էր : Կիւ-
մազրութեան չէր հանդուրժէր , սա-
կայն կատակի աչք կը գոցէր : Իր
միտքն հատու էր իր սրոյն պէս : Տուն
կուտար շատ մը նոտարներու , (ինքը
կ'ըսէր և նաքա կը գրէին) , միան-
գամայն այլ և այլ լեզուներով : Քա-